

ՀԱՐՑ

Լիցենզավորված անձի գործունեության իրականացման վայրի փոփոխման դեպքում տրամադրվում է առանձին լիցենզիա

ՊԱՏԱՍԽԱՆ

Պարզ լիցենզիա ստացած լիցենզավորված անձը լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրի փոփոխման համար լիցենզավորող մարմին պետք է ներկայացնի հայտ՝ նշելով իր կողմից նախկինում ստացած լիցենզիայի վավերապայմանները, ինչպես նաև գրավոր հայտարարություն՝ նախկինում ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին: Իրավաբանական անձինք հայտին կից ներկայացնում են նաև իրավաբանական անձը գրանցող պետական լիազորված մարմնի տեղեկանքը՝ իրավաբանական անձի կանոնադրությունում կատարված փոփոխությունների մասին: Եթե իրավաբանական անձի կանոնադրությունում կատարվել են փոփոխություններ, ապա ներկայացվում են նաև այդ փոփոխությունները:

Գործունեության իրականացման վայրի փոփոխման պահանջը տարածվում է միայն լիցենզավորման ենթակա գործունեության այն տեսակների վրա, որոնք «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի համաձայն պետք է իրականացվեն միայն լիցենզիայում նշված վայրում:

Եթե «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 10-րդ սյունակում նշված է «Վ» տառը, ապա յուրաքանչյուր վայրում գործունեություն իրականացնելու համար տրվում է առանձին լիցենզիա: